

**Ալբերտ Ա. Խառատյան, Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015, 533 էջ\*:**

**Բանալի բառեր** – արևմտահայ մամուլ, Կ պոլիս, Զմյուռնիա, համիդյան գրաքննություն, երիտթուրքեր, «Ազատամարտ» պաշտոնաթերթ, «Վերջին լուր» թերթ, «Արագած» շաբաթաթերթ, «Արևելյան մամուլ» օրաթերթ:

Հայ ժողովրդի բացառիկ ճակատագրով է պայմանավորված հայ պարբերական մամուլի պատմական դերն ու նշանակությունը: Մեր պարբերական մամուլը մեր տարեգրությունն է. այն և՛ պատմություն է, և՛ պատմող, իսկ արխիվների սակավության պայմաններում՝ նաև անգնահատելի սկզբնաղբյուր:

Հայ պարբերական մամուլի պատմության մի կարևոր ժամանակահատվածի՝ 20-րդ դարի առաջին քառորդի արևմտահայ մամուլի անցած ուղին է ամփոփում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Ա. Խառատյանի «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922 թթ.)» արժեքավոր աշխատությունը: Հեղինակն ի մի է բերել և ամբողջական, համակարգված կերպով ներկայացրել նշված ժամանակահատվածի արևմտահայ մամուլի պատմությունը՝ միաժամանակ բացահայտելով նաև մի շարք առաջատար պարբերականների առանձնահատուկ դերն ու նշանակությունը:

Աշխատության կարևորությունը հատկանշվում է այն հանգամանքով, որ նախկինում խնդրո առարկա մամուլը գիտական համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել: Եղել են միայն առանձին անդրադարձներ, դիտողություններ այս կամ այն պարբերականի կամ խմբագրի վերաբերյալ: Այս առումով Ա. Խառատյանի ուսումնասիրությունը հարուստ փաստագրական նյութ է տրամադրում և գիտական շրջանառության մեջ է դնում նոր տեղեկություններ:

Հետազոտության առարկան Կ. Պոլսի և Զմյուռնիայի առաջատար թերթերն ու ամսագրերն են: Հեղինակը դարակցբի առաջին քառորդի արևմտահայ մամուլի պատմությունը ներկայացրել է երեք փուլերով. 1. դարասկզբից մինչև Առաջին աշխարհամարտը, 2. Առաջին աշխարհամարտի և ցեղասպանության տարիները, 3. Զինադադարից հետո՝ մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը:

Ը (ԺԳ) փարի. թիվ 1 (53) հունվար-մայր, 2016  
ՎԿՎ համահայկական հանդես

\*Ընդունվել է տպագրության 25.03.2016:

Համիդյան գրաքննություն պայմաններում արևմտահայ մամուլը զուտ տեղեկատվական գործառույթ էր իրականացնում՝ արտացոլելով արևմտահայության կյանքը, կենցաղը, բարքերը: Ազգային-քաղաքական հարցերի քննարկումը դուրս էր մնում նրա օրակարգից: Հետևաբար մամուլի ժանրային բազմազանության, մասնավորապես հրապարակագրության մասին խոսք լինել չէր կարող: Այս շրջանում պարբերականների էջերում զարգանում էին հայ գեղարվեստական գրականությունը, գրաքննադատական միտքը: Մամուլում հանդես էին գալիս ժամանակի գրական երևելի դեմքերը՝ Մ. Մեծարենցը, Դ. Վարուժանը, Ռ. Զարդարյանը, Ռ. Սևակը, Թվկատինցին, Զ. Եսայանը, և ուրիշներ:

Համիդյան վարչակարգի տապալումից և Սահմանադրության վերահաստատումից հետո՝ 1908-1914 թթ., ձևական ազատության պայմաններում պարբերականների էջերում հայտնվում են արևմտահայության իրական կացության նկարագրությունները: Խմբագիրների և թղթակիցների համար սթափեցնող ազդակ են դառնում Կիլիկիայի հայության կոտորածները: Թերթերը սկսում են տպագրել ականատեսների վկայություններ, դիվանագիտական գեղույցներ, որոնք փաստում էին կոտորածները երիտթուրքերի կողմից կազմակերպված լինելու իրողությունը: Իսկ «1912 թվականից սկսած արևմտահայ մամուլում դրսևորվել է հայ հանրության խորին մտահոգությունը Արևմտահայաստանում բարենորոգումների, դրանց վերաբերյալ միջազգային քննարկումների ընթացքի համար»<sup>1</sup>, - գրում է հեղինակը:

Ուսումնասիրության մեջ առանձին գլխով ներկայացվում են 1908-1914 թթ. Կ. Պոլսի և Զմյուռնիայի առավել աչքի ընկած պարբերականները՝ «Բյուզանդիոնը» (1896-1922), «Հանրագիտակը» (1896-1908), «Սուրհանդակը» 1899-1908), «Մանգումեի էֆքյարը» (1866-1913), «Արևելյան մամուլ» հանդեսը (1871-1909), «Մասիս» գրական շաբաթաթերթը (1900-1908), «Ժամանակը» (1908-1914), «Հայրենիքը» (1891-1896, 1909-1910), «Դաշինքը» (1909-1914), «Հայ գրականությունը» (1911-1914), «Մարմնամարզը» (1911-1914):

Այս պարբերականները հիմնականում գիտահանրամատչելի կամ գրական բնույթ ունեին, ինչը դարձյալ պայմանավորված էր համիդյան վարչակարգի՝ հայ մամուլի հանդեպ անբարյացակամ վերաբերմունքով: Հիշյալ շրջանում Կ. Պոլսի և Արևմտահայաստանի հանրային, մշակութային, գիտական ու տնտեսական խնդիրները լայնորեն արծարծվել են այս պարբերականներում:

Ընթռնելով դարասկզբի գրական ու գեղագիտական նոր պահանջները՝ որոշ մտավորականներ ձեռնամուխ եղան գրական ուղղվածության պարբերականների հիմնմանը: Օրինակ՝ «Մասիս» ազգային, քաղաքական, գրական շաբաթաթերթի համար առաջնային էր համարում գեղարվեստական գրականությունը՝ իր զարգացման արդիական ընթացքով և մղումներով:

Համիդյան վարչակարգի տապալումից հետո՝ 1908-1909 թթ., Կ. Պոլսում լույս տեսան շուրջ չորս տասնյակ հայկական թերթեր ու հանդեսներ, որոնք հանդես եկան նախկին վարչակարգի խիստ քննադատությամբ: Ազատական

1 Ալբերտ Խառատյան, Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015, էջ 7:

գաղափարներն իրենց արտացոլումը գտան Կ. Պոլսի «Ժամանակ» թերթում: Զմյուռնիայում լույս տեսած «Դաշինքը», որն արտահայտում էր Հայ սահմանադիր ռամկավար կուսակցության գաղափարները, զուգորդում էր համազգային բնույթի հիմնահարցերի վերաբերյալ լրատվությունն ու դրանց գնահատականները:

Զմյուռնիայում լույս տեսնող «Հայ գրականությունը» հիմնականում ընդգրկում էր ժամանակի հայ և եվրոպական հեղինակների երկերն իմաստավորող գրաքննադատական հոդվածներ ու գրախոսականներ: Պարբերականին աշխատակցում էին արևմտահայ գրական և հրապարակագրական լավագույն ուժերը՝ Մ. Նուպարյանը, Չիֆթե-Սարաֆը, Ռ. Սևակը, Արտ. Հարությունյանը, Զ. Եսայանը, Հ. Նազարյանը և ուրիշներ:

«Մարմնամարզը» մեծ ներդրում ունեցավ հայ մարմնամարզական մշակույթի պատմության մեջ՝ ֆիզիկական մշակույթը հանրության մեջ ժողովրդականացնելու գործում:

Իսկ սհա 1915-1918 թթ. արևմտահայ մամուլի գործունեության վերաբերյալ, ինչպես նկատում է Ա. Խառատյանը, տեղեկությունները կցկտուր են, քանի որ չեն պահպանվել այդ տարիների պոլսահայ կամ զմյուռնահայ թերթերը: Այդուհանդերձ, ժամանակակիցների վկայություններում եղած սակավ, բայց արժեքավոր տեղեկություններով, փաստերով, հեղինակն ուրվագծել է նշված ժամանակահատվածի արևմտահայ լրագրության պատկերը: Ինչպես արձանագրվում է Ա. Խառատյանի աշխատության մեջ, ամբողջ հայ մամուլն այդ օրերին «խիստ վերապահ, զգույշ և խոհեմ էր»<sup>2</sup>:

Երիտթուրքական ռազմական գրաքննությունը հետամուտ եղավ նաև հայ մամուլի ոչնչացմանը: Ըստ ուսումնասիրության տվյալների՝ 1915-1918 թթ. Զմյուռնիայում հայերեն թերթ չի հրատարակվել, իսկ Կ. Պոլսում գործող տասը թերթերից («Ժամանակ», «Ազատամարտ», «Նոր աշխարհ», «Հայրենիք», «Մանգունի էֆքյար», «Առավոտ», «Արևելք», «Բյուզանդիոն», «Բանբեր» (հետագայում՝ «Վերջին լուր»), «Լուսարձակ») իրենց գոյությունը շարունակում էին միայն 4-ը՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և հայատառ թուրքերեն «Ճերիտեի շարգիլեն»՝ զրկված մամուլի լրատվական և բովանդակային գործառույթներից:

Ա. Խառատյանի դիտարկմամբ՝ «Երիտթուրքերը հայ մտավորականությանը 1915 թվականի ապրիլին և հետո զանգվածորեն ձերբակալելուց և կալանավորելուց մեկ տարի առաջ՝ 1914 թվականին, սկսել և ավարտել են նրան լռեցնելու և հասարակությունից մեկուսացնելու գործընթացը: Հայ հանրությունը Ա. Կ. Պոլսում, Ա. Զմյուռնիայում ու Արևմտահայաստանում, ինչպես և Թուրքիայի հայաբնակ մյուս վիլայեթներում 1915 թվականը դիմավորում էր գրեթե զրկված մամուլից և ուրեմն՝ մտավորականության հետ հաղորդակցվելու հնարավորությունից»<sup>3</sup>: Այս ամենին զուգահեռ երիտթուրքական կառավարողները փորձեցին ստեղծել նաև իրենց ձեռնասուն մամուլը, որը, սակայն, կարճ կյանք ունեցավ:

1915 թվականի ապրիլին Պոլսում դադարեցին գործել կուսակցական թերթերը՝ Հ Յ Դաշնակցության պաշտոնաթերթ «Ճակատամարտը» («Ազա-

2 Նույն տեղում, էջ 11:

3 Նույն տեղում, էջ 14:

տամարտը») և վերակազմյալ հնչակյան «Առավոտը»:

Իսկ հրատարակվող թերթերը ենթարկվեցին երկակի՝ թուրքական և գերմանական զինվորական գրաքննության: Վերջինս իրականացնում էին գերմանական զինվորական պաշտոնյաները:

1918 թվականի Մուդրոսի զինադադարից հետո մամուլի համար ստեղծվեցին վերածնության որոշակի հույսեր ծնող պայմաններ, որոնք պահպանվեցին մինչև քեմալականների իշխանության գալը: Այս շրջանում հայտնվեցին նոր պարբերականներ: Ինչպես նշվում է գրքում, 1919 թ. Կ. Պոլսում և Զմյուռնիայում դրանց թիվը անցնում էր երկու տասնյակից: Հետպատերազմյան քաղաքական ու տնտեսական անորոշության և անկայունության հետևանքով արևմտահայ մամուլն այլևս երկար կյանք չէր կարող ունենալ, ուստի պարբերականները փակվում էին մի քանի թվահամարից հետո<sup>4</sup>:

Առաջիններից մեկը իր «Ազատամարտ» պաշտոնաթերթը վերահրատարակեց Հայ Յեղավորական Դաշնակցությունը («Արդարամարտ», ապա՝ «Արիամարտ» և «Ճակատամարտ» անուններով):

Աշխատության մեջ հանգամանակից անդրադարձ կա Կ. Պոլսի հետպատերազմյան երգիծական մամուլին, որը նրբաճաշակ արվեստի բարձրության հասավ Ե. Օտյանի խմբագրած «Իզնատ աղա» երգիծական շաբաթաթերթում:

1919–1922 թթ. աշխուժացան պատանեկան և մարզական, թատերական, կանանց համար նախատեսված, գրական, գիտական, կրոնական, իրավագիտական, բժշկական հրատարակությունները: Այս իրողությունը բացատրվում է պատերազմից հետո Կ. Պոլսում ի հայտ եկած բազմաթիվ ազգային միությունների առկայությամբ<sup>5</sup>:

1919–1922 թթ. հրատարակված պարբերականները հիմնականում գոյատևում էին այնքան, որքան իրենց հիմնադիր միությունները: Սակայն անկախ մասնագիտական պարբերականների առատությունից, առաջատարներն ազգային–քաղաքական ուղղվածության պարբերականներն էին: Դրանցից Ա. Խառատյանի մենագրության մեջ առանձին բաժիններով, հանգամանորեն ներկայացված են Կ. Պոլսի «Վերջին լուր» թերթը, «Արագած» շաբաթաթերթը և Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» օրաթերթը:

Այս պարբերականներն արտացոլում էին պոլսահայ և զմյուռնահայ կյանքի գրեթե բոլոր բնագավառները, արձարծում համազգային նշանակության խնդիրներ՝ տարեգրելով պատմությունը: Սակայն շուտով Կ. Պոլիսն ու Զմյուռնիան գրաված քեմալական իշխանությունները խիստ վերահսկողություն են սահմանում մամուլի նկատմամբ:

«1923 թվականից հետո գոյատևելու էին ընդամենը մի քանի պարբերականներ: Փաստորեն 1922 թվականով ավարտվում է արևմտահայ մամուլի ավելի քան 80-ամյա պատմությունը, որ սկիզբ էր առել 1832 թ.՝ Կ. Պոլսի «Լրո գիր» թերթով: 1923-ից առ այսօր Ստամբուլում (Կ.Պոլիս) հրատարակվող հայ մամուլը, ինչպես ընդունված է համարել, մտնում է այլ՝

4 Տե՛ս նույն տեղում, էջ 366:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 487:

սփյուռքահայ մամուլի պատմության շրջափուլ»<sup>6</sup>, – գրում է Ա. Խառատյանը: Ուսումնասիրությունն ունի արխիվային նյութերի, այլ սկզբնաղբյուրների, գրականության, պարբերական մամուլի հարուստ մատենագիտական ցանկ: Գիտական բարեխղճությամբ է կազմված նաև անձնանունների, տեղանունների ցանկը: Գրքում տեղ են գտել խնդրո առարկա ժամանաշրջանի հայտնի մտավորականների, գրողների, խմբագիրների, ինչպես նաև պարբերականների վերտառությունների արժեքավոր լուսանկարներ:

Գիտնականը պարբերականների առաջադրած քաղաքական և հասարակական խնդիրները լուսաբանել է պատմագիտական և հասարակագիտական որոշակի հայեցակարգի հիման վրա, ինչը նրա մեծարժեք աշխատությանը հաղորդում է ընդգծված վերլուծական բնույթ:

Ա. Խառատյանի աշխատությունն ամբողջական և խոր պատկերացում է տալիս 20-րդ դարի առաջին քառորդի արևմտահայ հասարակական մտքի, ազգային խնդիրների, քաղաքական, մշակութային իրողությունների մասին՝ ստեղծելով ճանաչողական ու տեղեկատվական լուրջ բազա հայ մամուլի և քաղաքական մտքի հետագա ուսումնասիրողների համար:

Մարիամ Հ. Գևորգյան  
*Բանաս. գիյր. թեկնածու*

**Մարիամ Հ. Գևորգյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են արևմտահայ մամուլի ու հրապարակագրության հիմնահարցերը: Հրատարակել է երկու աշխատություն Գրիգոր Զոհրապի հրապարակագրության ու գեղագիտական հայացքների վերաբերյալ:

## Summary

**Albert A. Kharatyan, Western–Armenian press at the end of its history (1900–1922), Yerevan, Institute of History of NAS RA, 2015, 533 p.**

Mariam H. Gevorkyan

**Keywords** – Western Armenian press, Constantinople, Smyrna, Hamid censorship, Young Turks, the official newspaper “Azatamart”, newspaper “Verjin lur” (“Latest News”), weekly “Aragats”, newspaper “Arevelyan Mamul” (“Oriental Press”).

The following valuable work of Albert A. Kharatyan (Corresponding Member of NAS RA) called “Western–Armenian press at the end of its history (1900–1922)” summarizes a very important period of development of the Armenian periodical press – the history of Western Armenian press in the first quarter of the 20th century.

The author summed up and presented a certain period of the history of Western–Armenian press in a consistent and systematic way, defining at the same

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 489:

time the role and the importance of a number of leading periodicals.

The significance of the work consists also of the fact that it considers the periodic press that has not previously been the subject of systematic research. There were only a few references, comments concerning a particular periodical or editor.

The work by A. Kharatyan gives a full and deep understanding of Western-Armenian public opinion, national issues, political and cultural realities of the first quarter of the 20th century, creating some serious information basis for further study and research of media and political thought.

## Резюме

**Альберт А. Харатян, Западно-армянская пресса в конце своей истории (1900–1922), Ереван, Институт истории НАН РА, 2015, 533 с.**

Мариам Г. Геворкян

**Ключевые слова** – западно-армянская пресса, Константинополь, Смирна, гамидовская цензура, младотурки, официальная газета “Азатамарт”, газета “Верджин лур” (“Последняя новость”), еженедельник “Арагац”, газета “Аревелян мамул” (“Восточная Пресса”).

Ценная работа члена-корреспондента НАН РА Альберта А. Харатяна под названием “Западно-армянская пресса в конце своей истории (1900–1922)” обобщает очень важный период развития армянской периодической печати – историю западно-армянской прессы в первой четверти 20-го века.

Автор суммировал и в целостном и систематизированном виде представил период истории западно-армянской прессы, и в то же время определил роль и значимость ряда ведущих изданий.

Значение работы заключается также в том, что рассматриваемая периодическая пресса ранее не была объектом систематического исследования. Были только отдельные ссылки, комментарии по отношению к тому или иному изданию или редактору.

Работа А. Харатяна дает полное и глубокое представление о западно-армянской общественной мысли, национальных вопросах, политических и культурных реалиях первой четверти 20-го века, создавая серьезную информационную базу для дальнейшего изучения и исследования средств массовой информации и политической мысли.